Արձանագրություն N 3

N <<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>>
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 ապրիլի 2019թ.

ժ.12:00

Մասնակցում էին՝

Հայտեր բացող անդամներ՝ Կ. Կարապետյան /տնտեսագետ /

Ի. Երզեկյան /կադրերի գծով տեսուչ/

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան /բուժական գծով փոխտնօրեն/

անդամներ՝ Ջ. Հաջյան /տնտեսական գծով փոխտնօրեն/

Ք. Խաչատրյան /դեղատան վարիչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները

<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝

1.1 <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ., 2/2, Հեռ. +374 10 744212, natalipharm@bk.ru

1.2 <<Արֆարմացիա>> ՓԲԸ, ք.Երևան, Մյասնիկյան 1/6, Հեռ. +374 60 759999, arpharm.erevan@yandex.ru

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի և <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով

<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի և <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>>** ծածկագրով հրավերի I մասի 7.13 կետիում նշված փաստաթղթերի առկայությունը:

3.2 **<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>>** ծածկագրով ընթացակարգի 1, 4, 5, 7, 13, 14, 15 չափաբաժնների համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

3.3 **<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>>** ծածկագրով ընթացակարգի 10 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

3.4 **<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>>** ծածկագրով ընթացակարգի 6, 11 չափաբաժինները ճանաչել չկայացած, քանի որ գնային առաջարկները գերազանցում էին դրա համար նախատեսված ֆինանսական միջոցները:

3.5 <<**ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3**>> ծածկագրով ընթացակարգի 2, 3, 8, 9, 12, 16, 17, 18 չափաբաժինները ճանաչել չկայացած, քանի որ գնային առաջարկներ չեն ներկայացվել:

3.6 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3.7 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

4 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<**ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/3**>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

Անդամներ՝ _____ Ջ. Հաջյան

_____ Ք. Խաչատրյան

_____ Կ. Կարապետյան

_____ Ի. Երզեկյան

Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան